ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հունիսի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1–ին մասի 18-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում*** ***է.***

Երևան քաղաքում վթարային քանդման ենթակա շենքերից բնակիչների վերաբնակեցման աշխատանքները կազմակերպելու նպատակով թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի միջոցներով կառուցվող բազմաբնակարան շենքերից բնակարաններ հատկացնել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշման համաձայն՝ վթարային քանդման ենթակա շենքերի բնակիչների վերաբնակեցումը իրականացվում է պետական միջոցների հաշվին բազմաբնակարան շենքերում բնակարանների տրամադրման միջոցով։

Երևան քաղաքում առկա են 7 վթարային բնազմաբնակարան բնակելի շենքեր՝ բաղկացած 147 բնակարաններից։

Նշված շենքերից բնակիչների վերաբնակեցման առաջնահերթությունների վերաբերյալ առկա է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից տրված եզրակացությունը։

Շենքերի վերաբնակեցման աշխատանքները պետական մկջոցներով կառուցված և Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված, դեռևս չբաշխված բնակարանների թիվը և կառուցվածքը հնարավորություն չի տալիս իրականացնելու վերաբնակեցման աշխատանքները։

Հաշվի առնելով վերոգրյալը և վթարային շենքերից վերաբնակեցման աշխատանքների կատարման, բնակիչների անվտանգության ապահովման խնդիրների լուծման անհրաժեշտությունը՝ Երևան քաղաքի ավագանու ներակայացված որոշման նախագծով Երևանի քաղաքապետարանը հնարավորություն է ստանում Երևան համայնքի միջոցներով կառուցվող բնակելի շենքերից պայմանագրեր կնքելու միջոցով լուծելու վթարային քանդման ենթական շենքերից վերաբնակեցվող քաղաքացիների բնակարանային հարցերը, որոնք ցանկություն են հայտնում վերաբնակեցվելու նույն վարչական շրջանում։

Վերոնշյալ բնակարանները լինելու են ժամանակակից, նոր չափորոշիչներին համապատասխան կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերում։

Հարկ է նշել, որ նախկինում նման փորձ չի եղել և Երևան համայնքը երբևէ սեփական միջոցներով չի իրականացրել վերաբնակեցման աշխատանքներ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքում վթարային քանդման ենթակա շենքերից բնակիչների վերաբնակեցման ժամանակ Երևան համայնքի միջոցներով կառուցվող բազմաբնակարան շենքերից բնակարաններ հատկացնելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում վթարային քանդման ենթակա շենքերից բնակիչների վերաբնակեցման ժամանակ Երևան համայնքի միջոցներով կառուցվող բազմաբնակարան շենքերից բնակարաններ հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ